ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2025թ. հունվար

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2025 թվականի հունվարին կազմել է 7.1%, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ նվազել է -3.6 տոկոսային կետով:

Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %



2. Ծառայություններ

- Ծառայությունների ծավալի աճը կազմել է 12.6%, ինչն ավելի բարձր է, քան 2024թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Ծառայությունների աճին դրական են նպաստել հետևյալ ենթատեսակները. ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը՝ 8.7 տոկոսային կետով (տ/կ), «տեղեկատվություն և կապ»՝ 1.1 տ/կ, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 0.8 տ/կ, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտը՝ 0.8 տ/կ, անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտը՝ 0.9 տ/կ, մշակույթ, զվարճություն և հանգստի ոլորտը՝ 0.04 տ/կ, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտը՝ 0.2 տ/կ, վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտը 0.2 տ/կ, կրթության ոլորտը՝ 0.3 տ/կ, և սպասարկման այլ ծառայությունների ոլորտը՝ 0.1 տ/կ:
- Բացասական ազդեցություն է ունեցել տրանսպորտ՝ -0.6 տ/կ:

Ծառայությունների ծավալի աճ, %



3. Առևտրի շրջանառություն

- Ներքին առևտրի շրջանառության ծավալի աճը կազմել է 9.9%, ինչն ավելի ցածր է, քան 2024թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Առևտրի շրջանառությանը դրական են նպաստել. մանրածախ առևտրի, մեծածախ առևտրի և ավտոմեքենաների առևտրի ոլորտներում գրանցված համապատասխանաբար՝ 4.7%, 12.5% և 14.6 աճերը:

Ներքին առևտրի շրջանառության աճ, %



4. Շինարարություն

- Շինարարության ծավալի աճը կազմել է 11.6%: Աճին դրական են նպաստել՝ պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարության 15.0% աճը, բնակչության միջոցներով իրականացվող շինարարության 14.9% աճը և կազմակերպությունների միջոցներով՝ աճը 14.6%:
- Բացասական ազդեցություն են ունեցել՝ միջազգային վարկերը՝ -47.8%, (այդ թվում՝ ՀԲ-ն -74.6%, ԱԶԲ-ն՝-31.9%, ԳԶԲ-ն՝ -72.2%,), համայնքների միջոցներով իրականացված շինարարությունը -47.1%, մարդասիրական օգնության միջոցներով -29.6%,

Շինարարության ծավալի աճ, %



Արտաքին առևտրաշրջանառության ծավալը հաշվետու ժամանակաատվածում կազմել է 1,377.3 մլն ԱՄՆ դոլար, նվազել է՝ -40.0%, որից արտահանման ծավալը կազմել է 482.2 մլն ԱՄՆ դոլար, նվազել է՝ -49.2%, իսկ ներմուծումը՝ 895.1 ԱՄՆ դոլար, նվազել է -33.5%:

5. Արտաքին առևտուր

5.1 Արտահանում

Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել ԵՄ Երկրների գծով՝ 8.4%: Կրճատում են գրանցել ԵԱՏՄ երկրները՝ -36.7%, ԱՅԼ երկրները՝ -58.0%-ով և ԱՊՀ երկրների գծով -35.9%:

- Արտահանման աճին դրական են նպաստել հետևյալ ապրանքախմբերի աճերը. կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք աճը՝ 2.9%, բուսական ծագման արտադրանք՝ 28.8%, պատրաստի սննդի արտադրանք՝ 44.8%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ 52.9%, փայտ և փայտյա իրեր՝ 3.0%, թուղթ և թղթից իրեր՝ 45.4%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 45.6%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 1.3%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 68.2%,

- Բացասական ազդեցություն են ունեցել՝ կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր -76.3%, պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -26.5%, կաշվի հումք,կաշի,մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ -10.4%, մանածագործական իրեր՝ -37.2%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք քարեր և դրանցից իրեր՝ -70.6%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -49.3%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ -53.8%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ -43.8%, սարքեր և ապարատներ՝ -9.9%, արվեստի ստեղծագործություններ՝ -93,1%:

Արտահանման ծավալի աճ, %



Արտահանման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



5.2 Ներմուծում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել ԵՄ երկրների (4.0%), և ԱՅԼ երկրների (1,4%) գծով: ԱՊՀ երկրների ներմուծումը կրճատվել է -59.7%-ով, իսկ ԵԱՏՄ երկրները՝ -60.3%-ով:

- Ներմուծման ծավալի աճը կազմում է -33.5%, ինչն ավելի ցածր է, քան 2024թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Աճին դրական են նպաստել կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքը՝ 11.5%, բուսական ծագման արտադրանք՝ 24.4%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 35.3%, պատրաստի սննդի արտադրանքը՝ 44.8%, հանքահումքային արտադրանքը՝ 19.2%, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ 6.2%, փայտ և փայտյա իրեր՝ 0.4%, թուղթ և թղթից իրեր 25.4%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 35.8%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 47.6%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ՝ 69.8%, սարքեր և ապարատներ՝ 23.4%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 26.0%:
- Բացասական ցուցանիշներ են գրանցել՝ քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը՝ -37.3%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ -17.2%, մանածագործական իրեր՝ -25.2%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ -4.6%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ -78.5%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ -22.0%, արվեստի ստեղծագործություններ՝ -87.5%:

Ներմուծման ծավալի աճ, %



Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



6. Արդյունաբերություն

- Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է -10.4%: Հիմնական ճյուղերից աճ է գրանցել. էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 9.9%:

  Մշակող արդյունաբերությունը, Հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը և Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը նվազել են համապատասխանաբար -16.2%, -9.3% և -0.2%:



6.1 Մշակող արդյունաբերություն

Մշակող արդյունաբերության ծավալում ենթաճյուղերից աճ են գրանցել՝ «Սննդամթերքի արտադրությունը» աճել է 8.8%-ով, «ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 94.4%-ով, «մանածագործական արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 42.4%-ով, «փայտանյութի մշակում, բացի կահույքից»՝ աճել է 17.0%-ով, «թղթի և թղթե արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 17.8%-ով, «պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացումը»՝ աճել է 13.0%-ով, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը»՝ նվազել է 47.0%-ով, «դեղագործական արտադրանքի արտադ-րությունը»՝ աճել է 4.0%-ով, «ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 26.7%-ով, «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 48.1%-ով, «պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրությունը»՝ աճել է 5.4%-ով, «համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրությունը»՝ աճել է 450.0%-ով, «էլեկտրական սարքավորանքի արտադրությունը»՝աճել է 54.2%-ով, «այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն»՝ աճել է 610.0%-ով, «մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում» աճել է 7.6%-ով:

Ի հակադրություն վերոնշյալ ենթաճյուղերի նվազել են՝ «Խմիչքների արտադրությունը»՝ նվազել է -25.2%-ով, «հագուստի արտադրությունը»՝ նվազել է -3.9%-ով, «կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրությունը»՝ նվազել է -18.2%-ով, «հիմնական մետաղների արտադրությունը»՝ նվազել է -68.4%-ով, «կահույքի արտադրությունը»՝ նվազել է -8.2%-ով, «Մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում»՝ նվազել է -0.1%-ով «արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում»՝ նվազել է -33.6%-ով: